

**ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ ԳԱՂՏՆԱԼԵԶՎԻ ՏԵՂԸ ԳՆԶՈՒԱԿԱՆ
ԼԵԶՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Բանալի բառեր՝ հայ-բոշաների գաղտնալեզու, բոշայերեն, գնչուերեն, լոմալիեն, դոմարի, ռոմանի, բարբառ, նախագնչուերեն, գուգաբանություն

Ընդհանուր նկատառումներ

Մերձավոր Արևելքից մինչև Արևմտյան Եվրոպա ընկած հսկայական տարածքներում սփռված գնչուական լեզուները և բարբառները մինչև օրս չեն ենթարկվել որևէ հստակ դասակարգման: Նման բացթողման ամենահիմնական պատճառներից մեկը, թերևս, առանձին վերցրած բարբառների կամ լեզուների խիստ անհամաչափ ուսումնասիրությունն է: Ընդ որում, նման անհամաչափությունն արդյունք է ոչ միայն այս կամ այն լեզվի կամ բարբառի առավել կամ պակաս ուսումնասիրվածության, այլ նաև հետազոտությունների իրականացման զուտ ժամանակագրական հսկայական տարբերության²:

Մրանից բացի, ի հակադրություն եվրոպական գնչուների լեզվի, որի հիմնական բարբառները, բավարար չափով ուսումնասիրված լինելով, ենթարկվել են որոշակի դասակարգման³, ցարդ անորոշ է մերձավորարևելյան գնչուների շրջանում գրի առնված լեզվական մի քանի տարբերակների առանձին լեզու կամ միևնույն լեզվի բարբառ հանդիսանալու հանգամանքը: Մյուս կողմից, դեռևս հստակեցված չեն նաև, զուտ պայմանականորեն, երեք հատվածների՝ ռոմանի (Եվրոպա), լոմալիեն (Հայաստան)⁴ և դոմարի (Մերձավոր Արևելք), բաժանվող

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ, էլ. փոստ՝ vardan.vosknaian@ysu.am

² Որպես օրինակ կարելի է նշել, ասենք, դարաչների լեզվի գրառման վերջին փորձը, որը կատարվել է մոտ մեկ ու կես դար առաջ (Паткановъ, К. 1887. Цыганы. Нѣскольکو словъ о нарѣчійахъ закавказскихъ цыганъ: Боша и Карачи. СПб.: Типографія Императорской Академіи Наукъ), մինչդեռ Թուրքիայի արևմտյան հատվածներում բնակվող *Sepečides* անուով հայտնի գնչուների բարբառը ուսումնասիրվել է համեմատաբար վերջերս (Cech, P. & Heinschik, M. 1999. Sepčides-Romani: Grammatik, Texte und Glossar eines türkischen Romani-Dialekts. Wiesbaden: Harrassowitz Verlag):

³ Տարբեր դասակարգումների համար մանրամասն տե՛ս Вентцель, Т. В., Черенков, Л. Н. 1976. Диалекты цыганского языка. Языки Азии и Африки, 1, Москва: Наука: : 283-332, Ventcel, T. 1983. The Gypsy Language. Moscow: Nauka. Եվրոպական գնչուների լեզվի բարբառային դասակարգման նոր փորձ ներկայացնող ուսումնասիրություններից է՝ Matras, Y. 2002. Romani: A linguistic Introduction. Cambridge: Cambridge University Press:

⁴ Այս հոդվածում *բոշայերեն*, *հայ-բոշաների գաղտնալեզու* և *լոմալիեն* եզրույթները կիրառվում են որպես լիարժեք հոմանիշներ:

ամբողջ գնչուական լեզվական զանգվածի ներառաբառային առնչակցությունները:

Իսնդրին առաջին անգամ անդրադարձել է Ֆ. Ն. Ֆինքը «Հայ-գնչուերենի դիրքը ազգակից բարբառների շրջապատում» ծավալուն հոդվածի շրջանակներում⁵: Դրանում հեղինակը փորձ է կատարում որոշել բոշայերենի ծագումը և տեղը հնդարիական լեզուների և գնչուական բարբառների համակարգում: Դիտարկելով բոշայերենի հնչյունական կազմը և բառապաշարը պատմահամեմատական լեզվաբանության կտրվածքով, և, փաստորեն, առաջին անգամ ստուգաբանելով հայ-բոշաների գաղտնալեզվի հնդարիական ծագում ունեցող մոտ 100 բառ, հեղինակը հանգում է այն կարծիքին, թե հնդարիական լեզուների շարքում հայ-բոշաների լեզուն ունի եվրոպական գնչուների բարբառներից տարբեր ծագում. այն սերում է բուն հնդարիական պրակրիտներից՝ ամենայն հավանականությամբ *շասրասենիից* (*Śaurasenī*) կամ պրակրիտները շարունակող ուշ միջին հնդարիական լեզուներից (*Apabhramśa*), մինչդեռ արևմտյան գնչուերենը՝ ռոմանին, հանգում է ներկայիս դարոյան լեզուների նախնին համարվող *պայշաշի* (*Paiśācī*) պրակրիտին, կամ, օգտագործելով այսօրվա եզրաբանությունը, բոշայերենն ունի հյուսիսարևմտյան հնդարիական, իսկ արևմտյան գնչուների լեզուն դարոյան ծագում:

Պետք է նշել, որ նման եզրահանգումը հենվում է բավական թույլ հենքի՝ միայն մի քանի բառերի վերլուծության վրա, և բացի այս աշխատանքը հրապարակվել էր այն ժամանակ, երբ դեռևս հրապարակ չէր իջել Ա. Մաքալիստերի պաղեստինյան գնչուների լեզվին նվիրված հիմնարար աշխատությունը, որն ավելի ընդարձակ նյութ էր տալու գնչուական բարբառների կամ լեզուների դասակարգման համար⁶:

Գնչուական լեզվական զանգվածի բարբառային դասակարգման առաջին հիմնավորված փորձը կատարել է անգլիացի գնչուագետ Ջ. Սամփսոնը: Նա «Գնչուների ծագման և վաղ տեղաշարժերի շուրջ» հոդվածում⁷, ինչպես նաև մի քանի տարի անց հրատարակած Ուելսի գնչուների լեզվին նվիրված մենագրության մեջ⁸, զարգացնում է այն տեսակետը, որ գնչուական լեզվական միատարր զանգվածը տրոհվել է Իրանի տարածքում միայն, և, որ գնչուերենը, լինելով հյուսիսարևմտյան

⁵ Finck, F. N. 1906. Die Stellung des Armenisch-Zigeunerischen im Kreise der verwandten Mundarten. Rudolf Haupt. Buchhandlung und Antiquariat. Katalog 9. Indien und Iran. Halle:


⁶ Macalister, R. A. S. 1914. The Language of the Nawar or Zutt, the Nomad Smiths of Palestine. Gypsy Lore Society Monographs, No. 3. London:

⁷ Sampson, J. 1923. On the Origin and Early Migrations of the Gypsies. Journal of the Gypsy Lore Society (3rd S.), 2(4): 162-194:

⁸ Sampson, J. 1926. The Dialect of the Gypsies of Wales. London: Oxford University Press:


հնդարիական լեզու, ուղղակիորեն չի հանգում մեզ հայտնի հինգ պրակրիտներից որևէ մեկին: Ըստ հին հնդարիական **gh**, **dh** և **bh** ձայնեղ շնչեղ բաղաձայնների գնչուական լեզուներում հետագա արտացոլման, գիտնականը վերջիններս բաժանում է երկու բարբառախմբի, դրանք պայմանականորեն անվանելով **ben** և **phen** խմբեր, ի նկատի ունենալով հին հնդարիական **bhaginī-** «քույր» բառում շնչեղ բաղաձայնի հետագա հնչյունական զարգացումը՝ եվրոպական գնչուների լեզվում **phen**, հայկական գնչուների լեզվում **p'en** և մերձավորարևելյան գնչուների բարբառներում **ben** տարբերակներով՝

նախագնչուերեն



Իսնդիրը քննարկել է նաև Ռ. Թերները իր մեծածավալ «Գնչուերենի դիրքը հնդարիական լեզուներում» հոդվածում⁹: Անգլիացի նշանավոր հնդարիագետը կարծիք է հայտնում, որ գնչուական ողջ լեզվական զանգվածի երեք հիմնական բարբառները, որոնք նա կոչում է համապատասխանաբար, **rom**, **lom** և **dom**, արդեն Հնդկական թերակղզում առանձնացել էին միմյանցից և, փաստորեն, հակադրվելով Սամփտոնին, խոսում է գնչուական երեք առանձին լեզուների մասին, չժխտելով սակայն, որ սրանք սերում են միևնույն հնդարիական ծագման նախաբարբառից՝

նախագնչուերեն



⁹ Turner, R. 1926. The Position of Romani in Indo-Aryan. Journal of the Gypsy Lore Society (3rd S.), 5(4): 145-189:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ աշխատությունները հիմք նախապատրաստելով գնչուերենի բարբառային դասակարգման համար, չեն ընդգրկում ներգնչուական հնչյունական և բառապաշարային զուգաբանությունների հնարավոր լայն բույլ¹⁰, ուստի ստորև, որպես հիմք ընդունելով հայ-բոշաների գաղտնալեզուն, հնարավորին մանրամասն կներկայացվեն հիշյալ զուգաբանությունները, որոնք, թերևս, մինչ այժմ ուշադրության չարժանացած վստահելի միջոցներ են ներգնչուական բարբառային դասակարգման որոշակի պատկեր կազմելու համար:

Հնչյունական զուգաբանություններ

1. Բառասկզբի դիրքում հ. հա. **gh-**, **dh-**, **bh-**բաղաձայնները լոմավրենում և ռոմանիում փոխվում են շնչեղ **k’-/kh-**, **t’-/th-**, **p’-/ph-**¹¹, իսկ դոմարիի բարբառներում կորցնում են շնչեղությունը՝ պահպանելով բաղաձայնի որակը, համապատասխանաբար՝ **g-(q-)**, **d-**, **b-**.

h. հա.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			աղ.	մշ.	ղչ.
ghāsá- «խոտ»	k’as	khas	gās	qas	gas
gharmá- «տաքություն»	k’am	kham	gam	gam	gam qam*
dhúma- «ծուխ»	t’u(v)	thuv	dif	-**	dadu***
*dhägga- «թել»	t’av	thav	dāf	def	-
bhagini- «քույր»	p’en	phen	bēn	ben	ben behn
bhrátř- «եղբայր»	p’al	ph(r)al	bār	–	bar bor****

* Հնմն.՝ վն. **gam**, ղգ. **kam**, կք., ղմ. **gaham**, հղ. **gām** «արև»:

** Մարաշի գնչուների լեզվում վկայված է **jaili** «ծուխ» բառը, որը սերում է հ. հա *jvalá- / jvalā- / jvālā-* «բոց, բոցավառում» (√ *JVAL* «բոցավառել») ձևից:

*** Անհասկանալի է առաջին՝ *da-* փանկի ծագումը:

**** Վերջին երկու բառերի համար հնմն.՝ սիր. **ban**, կք. **bhanu** «քույր» և սիր. **bār**, կք. **bhairu**, հղ. **bahr** «եղբայր»:

Ինչպես արդեն նշվեց վերևում, հին հնդարիական հիշյալ բաղաձայնների արտացոլումը երեք հիմնական գնչուական բարբառախմբերում հիմք է հանդիսացել, որպեսզի լոմավրենը և ռոմանին

¹⁰ Հարկ է նշել, մասնավորապես մերձավորարևելյան գնչուական նյութին գրեթե չանդրադառնալը, հաճախ միայն երկու գնչուական բարբառախմբի միմյանց հետ համեմատությունը և այլն:

¹¹ Ռոմանիում հնչյունական այս անցումները կրում են համատարած բնույթ, մինչդեռ լոմավրենում առկա են որոշ բացառություններ (տե՛ս ստորև):

միավորվեն միևնույն ենթախմբում: Հարկ է նշել սակայն, որ այս տեսությունը քննադատության չի դիմանում հենց միայն այն պատճառով, որ լոմավրենում հիշյալ անցումները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են արևմտահայ բարբառների ազդեցությամբ: Այսպես վաղ լոմավրենը, ինչպես մերձավորարևելյան գնչուական բարբառները, ըստ երևույթին, ի սկզբանե կորցրել էր միայն *h*. հա. **gh-**, **dh-**, **bh-** բաղաձայնների շնչեղությունը դրանք արտացոլելով որպես ***g-**, ***d-**, ***b-**, իսկ հետագայում դրանք բարբառային հայերենի ազդեցությամբ ենթարկվել են երկրորդական շնչեղացման՝ ***g-** > **k'-**, ***d-** > **t'-**, ***b-** > **p'-**¹²: Սրա օգտին են խոսում լոմավրենում պահպանված որոշ բառեր, որոնք շրջանցել են հիշյալ հնչյունական անցումները:

h. հա.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղչ.
ghara- «տուն»	gar	kher	-	-	gar*
dhāv- «վանալ»	dov-	thov-	dāu-	do-***	-
dhár- «ունենալ»	dar-	ther-	-	-	-
bhag- «ջարդել»	bak'-	phag-	bag-	-	-

* Հմմտ.՝ վն. **gar** «տուն»: Գնչուական մյուս բարբառներում վկայված են՝ պղ., նշ. **kuri**, ղն. **kur** «տուն, վրան», ղչ. **guri**, նղ. **kurri** «վրան», մշ. **guri**, **gur**, լր. **kuri**, կր. **kuri**, **kiri**, մկ. **küri**, սիղ. **kiri** «տուն», որոնք հասնում են *h*. հա. **kuṭi(kā)** «կյուղակ, խրճիղ» ձևին:

** Հմմտ.՝ ղն. **duhu-** «րիսնալ»:

2. Միջձայնավորական մ. հա. **-h-** < *h*. հա. **-dh-** լոմավրենում և դոմարիում պահպանվում է, իսկ ռոմանիում կորում:

h. հա.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղչ.
vadhūṭi- «հարս»	vahri	bori	wahri	vahri	-
madhulá- «ոգելից խմիչք»	mahl	mol*	-	-	-
vadh- «խփել»	vah-	-	-	vah-	-

* Ռոմանիից բերված բառերում **-o-** ձայնավորն առաջացել է **-h-**-ի անկյան հետևանքով՝ ***au-** երկհնչյունից, հետևաբար, կարելի է վերականգնել վաղ ռոմանի ***bauri** և ***maul** ձևերը:

3. Բառասկզբի դիրքում *h*. հա. **v-** պահպանվում է լոմավրենում և դոմարիի բարբառներում, մինչդեռ ռոմանիում փոխվում է **b-**-ի:

h. հա.	լոմ.	ռոմ.	դոմ.
--------	------	------	------

¹² Հմմտ.՝ հյ. արլ. **qal** > արմ. **ṗal**, արլ. **ḡorpu** > արմ. **ṗorpu**, արլ. **ṗah** > արմ. **ṗah** և այլն:

			պղ.	մշ.	ղջ.
* varta -«կյորքար»	var	bar, bar	waṭ	vat	bat*
varšá - «տարի»	vas	berš	wars	bers**	-
* varšanta(ka) -«անձրև»	vasəndav	brišind(o)	warsinda	varsündi	varsinda***
vāla - «մազ»	val(is)	bal	wāl(i)	val****	-
* vikriṅ -«վանառել»	vəgn-	bikn-		vukn-	vəgən-
vadhūṭi - «հարս»	vahri	bori	waḥri	vahri	-

* Մա, թերևս, միակ դեպքն է, երբ վկայված է հ. հա. **v-** > ղջ. **b-** անցումը: Հմնն. նաև՝ մս. **vat**, սիր. **watt**, հւ. **wat**, բլ. **vatta**, ղգ. **path** «քար»:

** Բացառիկ դեպքերից է, երբ վկայված է հ. հա. **v-** > մշ. **b-** անցումը: Հմնն. նաև՝ խու. **vars** / **bars**, կր. **varas** / **baras** «տարի»:

*** Հմնն.՝ նր. **würsinda**, հւ. **waursundaw**, կր. **bursenden** «անձրև»:

**** Հմնն.՝ սղ. **vāl**, կր. **val** / **bal**, ղգ. **bal** «մազ», վս. **valī** «մորյուք»:

4. Միջձայնավորական դիրքում հ. հա. **-t-** բաղաձայնը լուծավրենում և ռոմանիում փոխվում է **-l-**ի, իսկ դոմարիում զարգանում է որպես **-r-**.

h. հա.	լու.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղջ.
ghrtá - «յուղ»	kʰəl*	khil	gir(i)	gur	-**
yuvati - «դեռատի աղջիկ»	juvlik***	juvel juvli	juar juri****	-	jivi jive*****
gītaka -, «երգ»	gīti- gilav	gili	grēf	-	qire
bhrātr - «եղբայր»	pʰal	ph(r)al	bār	-	Bar, bor

* Հմնն.՝ Թորատի շրջանի լուծավրենում վկայված **kiil**, **kür** «յուղ» ձևերը:

** Ղարաշի գնչուների լեզվում վկայված է **tehl** «յուղ» բառը, որը լուծավրեն **tel** «ձեթ, բուսական յուղ», զգ., սբ. **til**, ղն. **fil**, **fel** «յուղ, կարագ» բառերի հետ հասնում է հ. հա. **taila**- «քնթույթի ձեթ» ձևին:

*** Կազմված է հայերեն **-ik** փոքրացուցիչ-փառաբանական ածանցով փայ լու. *

juvli «երիտասարդ աղջիկ» ձևից:

**** Հմնն.՝ լբ. **juri** «կին»:

***** Ղարաշի գնչուների լեզվի այս ձևը, Նիշապուրի շրջակայքի գնչուական բարբառի **jewī** «մայր, կին» տարբերակի հետ միասին, յուրօրինակ է նրանով, որ, ի տարբերություն գնչուական մյուս լեզուների և բարբառների, այն ուղղակի հանգում է սյվ. **juvai-**, **juai-**, որտեղ բաղաձայնի կորուստը տեղի է ունեցել դեռևս միջին հնդարիական լեզվաբարձրաշրջանում: Իրանական գնչուների բարբառների մեծ մասում

h. hu. **-t-** բաղաձայնը պահպանվում կամ ձայնեղանում է՝ սբ. **jewit**, գջ. **jewet**, դն. **jewitd**, իս. **javitd**, սս. **jevid** «կին»: Հմմտ. նաև՝ հայ. **jur** «կին»:

5. Բառասկզբի դիրքում h. hu. **d-** բաղաձայնը լոմավրենում արտացոլվում է որպես **l-**, իսկ ռոմանիում և դոմարիում պահպանվում է.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			սղ.	մշ.	դշ.
Duvē «երկու»	lu(y)i	duy	di(s)	(di)di	duy, doy*
dēks- «տեսնել»	lek'-	dikh-	-	-	dik-
dánta- «ատամ»	lant'	dent	donda	dent**	-

* Հմմտ.՝ ուլ. **dūi**, գգ. **dui**, նբ. **di**, սիր. **dedi**, վն. **diui** «երկու»: Արմատի կրկնությունը կազմված ձևերը (**dedi** ևն), որոնք գործածվում են միայն հաշվելիս, գոյացել են, ըստ երևույթին, քրդերենի ազդեցությամբ, հմմտ. քրդ. **didu** «երկու»:

** Հմմտ. լբ. **dend**, դգ. **dandi**, գջ., վս. **denderi**, դն. **dendik**, կբ. **dandeir**, ջֆ. **dinkī** «ատամ»: Իրանի Սիրջանի շրջանի գնչուների լեզվում վկայված **dindān** բառը, հավանաբար, փոխառված է սրբ. **dandān** «ատամ» ձևից:

6. Բառասկզբում h. hu. **đ-** բաղաձայնը, լոմավրենում դառնում է **l-**, ռոմանիում՝ **r-**, իսկ դոմարիում՝ պարզ **d-**.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			սղ.	մշ.	դշ.
đōmba- «գնչու»	lom	rom, řom	dom	-	dom*
*đōva- «գղալ»	loyi	roi, řoy	dōwi	-	-

* Հմմտ.՝ հայ., վն., մս. **dom** «գնչու»:

7. Բառասկզբի դիրքում h. hu. **h-** բաղաձայնը, լոմավրենում և դոմարիում նույնությամբ պահպանվում է կամ անցնում է **x-**ի, իսկ ռոմանիում կորչում է.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			սղ.	մշ.	դշ.
hásta- «ձեռք»	hat'	vast*	xast	hast	xast(a)**
hrdaya- «սիրտ»	xolav	yilo	xri	-	xi***
hás- ծիծաղել»	xas-	as-	xaz-	xas-	xaz-

* Ռոմանիում ձայնափոխով սկսվող բառերում հանախ կարող են ալելանայ հավելվածային **v-** կամ **y-** բաղաձայնները:

** Հմմտ.՝ լբ., կբ., նբ. **xast**, սս., սջ., ջֆ., դն. **xas**, գջ. **xat**, դգ. **kust** «ձեռք, մատ»:

*** Հարաչի գնչուների լեզվում միջձայնափոխական բաղաձայնը չի պահպանվել և բառը հանգում է սկի. **híaa-** ձևին:

8. Բառասկզբի և բառամիջի դիրքերում վկայված *h. hu. ś* բաղաձայնը լոմավրենում անցնում է *s-ի*¹³, ռոմանիում պահպանվում է, իսկ դոմարիի բարբառները այն արտացոլում են, որպես *s*, նաև՝ *ś*.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղյ.
úpavis- «նստել»	ves-	beš-	wěs-	veš-	beš-
náš- «փախչել, կորել»	nasu-	naš-	-*	-	neys-
dáša- «տաս»	las	deš	das, des	dez, dest	-**
šrngā- «կտտոշ»	sənkʻ	šing	šingi	-	-
šúška(ka)- «շոր»	sukʻav	šuko	ška	-	-

* Պատճառի նյան գնչուների լեզվում վկայված **našt-** «փախչել, կորել» բայը հանգում է նույն հնդարիական արմատի անցյալի դերբայի **našta-** ձևին, և այստեղ, բնականաբար, առկա է *h. hu. -š- > պղ. -š-* անցումը:

** Հարաջի գնչուների լեզվում վկայված **dah** «տաս» ձևն, ըստ երևույթին, փոխառություն է պարսկերենից (պղու. **dah**): Հմնտ.՝ նր., սիր. ղգ. **das, des** «տաս»:

9. Հին հնդարիական *-š-* բաղաձայնը լոմավրենում և դոմարիում փոխվում է *-s-ի*,¹⁴ իսկ ռոմանիում դառնում *-š-*.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղյ.
manuśyá- «մարդ»	manus	manuš	manus	-	manis, manes*
varśá- «տարի»	vas	berš	wars	bers**	-
*varśanta(ka)- «անձրև»	vasəndav	brišind(o)	warsinda	varsündi	varsinda** **

* Հմնտ.՝ սիր. **mānus**, հպ. **manus**, լր. **menes**, նր. **manis**, մպ. **manis**, վն. **minis** «մարդ»:

** Հմնտ.՝ իս. **vars / bars**, լր. **varas / baras** «տարի»:

**** Հմնտ.՝ նր. **würrsinda**, հպ. **waurkundaw**, լր. **bursenden** «անձրև»:

10. Հին հնդարիական *-st-* բաղաձայնական խումբը լոմավրենում պարզեցվում է *-t-ի*,¹⁵ իսկ ռոմանիում և դոմարիում պահպանվում է.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.
--------	------	------	------

¹³ Նման անցում արդեն վկայված է բոլոր պրակրիտներում:

¹⁴ Այս փոփոխությունը բնորոշ է հին հնդարիականից միջին հնդարիական շրջանին անցնում ժամանակահատվածին և արդեն վկայված է բոլոր պրակրիտներում, հմնտ.՝ պկ. **maṇussa-**, **mañssa-** «մարդ», պկ. **varisa-**, Աշ. արձ. **vasa-** «տարի»: Հատկապես *t-*-ով կազմված բաղաձայնական խմբերում դոմարիում առկա է *-š-* > *-ś-* անցումը, հմնտ.՝ պղ. **našt-** «փախչել, կորել» < *h. hu. našta-* «փախած, կորած»:

¹⁵ Նշված բաղաձայնական խումբը պարզեցվում է նաև բոլոր պրակրիտներում, հմնտ.՝ պկ. **hattha-** «ձեռք», **ṇatthi** «չկա»:

			պղ.	մշ.	ղչ.
hásta- «ծերք»	hat'	vast*	xast	hast	xast(a)*
násti – «շկա»	nat'	nasti	-	nasti	-

* Բաղաձայնական խումբը բացի լոնավրենից պարզեցվում է նաև Իրանի գնչուական որոշ բարբառներում, հնմն.՝ գջ. **xat**, պս., սջ., ջֆ., ղն. **xas**, բայց նաև լբ., կբ., նբ. **xast**, «ծերք, սատ»:

11. Հին հնդարիական **-sth-** և **-ṣṭh-** բաղաձայնական խմբերն լոնավրենում պարզեցվում են **-t'-ի**,¹⁶ իսկ ռոմանիում և դոմարիում **-št-**, **-šd-** անցմամբ պահպանվում .

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղչ.
ut–sth– «ելնել»	ut'(lu)-	ušt-	št-	ušt-, išt-	išd-
kāṣṭha- «վիպտ»	kaht', kayt' *	kašt	kašt	gašd**	-

* Լոնավրենում **-h-** / **-y-** բաղաձայնի զոյոյթունը արդյունք է լատ երևույթին, վաղ լոնավրենին բնորոշ ռնգայնացման հետագա կորստի, ուստի վաղ լոնավրենի համար կարելի է վերականգնել ***kāṭ'** «վիպտ; ծառ» ձևը: Լոնավրենում վկայված է նաև **kahr / kayr** «վիպտ» բառը, որը, հավանաբար, նույնպես հանգում է h. hu. **kāṣṭha-** ձևին, միջին հնդարիական **kāṣṭha-** բառայթի միջոցով, շնչեղության կորստի հետևանքով մ. hu. ***kāṭta-** > վաղ լոմ. ***kār**, հնմն.՝ պի. **kāhruo** «վառելավիպտ»:

** Հնմն.՝ սիր. **qašt**, սջ., դբ. **kāštā** «վիպտ»:

12. Միջձայնավորական դիրքում h. hu. **-tṭ-** և **-rt-** բաղաձայնական խմբերը լոնավրենում և ռոմանիում փոխվում են **-r (-r')**-ի, իսկ դոմարիում **-t-ի**.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղչ.
pētṭa- «վոր»	per	per, peṛ	pēt	-	-
kuṭṭ- «խսիել»	kur-	kuṛ-	ukt-***	-	-
*varta- «կլոր քար»	var	bar, baṛ	waṭ	vat	bat***
*āṛta(ka)- «այլուր»****	arav	(v)aro, (v)aṛo	atō	ata	ata

* Հնմն.՝ վս., սջ., ջֆ. **pīṭū**, դգ. **barri** «վոր»:

** Դրասիրիտությանը՝ վաղ պղ. ***kut-** ձևից:

*** Հնմն.՝ նսև.՝ մպ. **vat**, սիր. **watt**, հպ. **wat**, բլ. **vatta**, դգ. **path** «քար»:

**** Հնմն.՝ սկ. **aṭṭa-** «այլուր»

¹⁶ Բաղաձայնական խումբը պարզեցվում է նաև բոլոր պրակրիտներում, հնմն.՝ պկ. **uṭṭh-** «ելնել»:

13. Բառասկզբի դիրքում վկայված հ. հա. **dv-** բաղաձայնական խումբը լուսավրենում և դոմարիում փոխվում է **b-**¹⁷, իսկ ռոմանին այն պահպանում է.

h. hu.	լոմ.	ռոմ.	դոմ.		
			պղ.	մշ.	ղշ.
dvára- «դում»	bar	vudar*	bāra**	-	bahr

* Ռոմանիի այս ձևը դրասիոսությանը գոյացել է ***duvar** բառից:

** Այս բառը պատեասիկյան գնչուների լեզվում կիրառվում է «դուրս» իմաստով, իսկ «դում» հասկացության համար կիրառվում է **kapi** < թրք. **kapi** «դում» բառը; հմմտ. նաև՝ դգ., կբ., դմ. **kapi** «դում», որոնք նույնպես հանգում են նշված թուրքական ձևին:

Բառային զուգաբանություններ

Հաշվի առնելով գնչուական տարբեր բարբառների անհամաչափ ուսումնասիրությունը և դրանց բառանյութի ոչ բավարար գրանցումը, այստեղ բերվում են այն բառային զուգաբանությունները, որոնք բավական ընդարձակ են ներկայացված այս բարբառներն արտացոլող նյութերում.

1. «**Տղա, որդի**» – գնչուական բարբառները այս հասկացությունների համար օգտագործում են հին հնդարիական տարբեր արմատների հանգող կամ անհայտ ծագման ձևեր, ինչպես նաև քրդական փոխառություններ.

		«տղա, որդի»	.
լոմ.		innav*	<i>անհայտ է</i>
ռոմ.		čhavo** raklo	h. hu. *čhāpa(ka)- h. hu. lađikka-
դոմ	պղ.	čōna «տղա»*** zārō «տղա» potra**** «որդի»	h. hu. *čhāpanna- քրդ. zārō h. hu. putrá(ka)-
	մշ.	gor / kur*****	քրդ. kuř
	ղշ.	zaru	քրդ. zārū

* Այս բառը վկայված է նաև Թուրքիայի Բոլուի գավառի մտադործների գաղտնալեզվում, հմմտ.՝ մղ. **innav** «տղա»: Ալնի լուսավրենում վկայված է **č'aya** «տղա, երեխա» ձևը, որը, եթե փոխառյալ չէ մերձասիորարևելյան գնչուական որևէ բարբառից, սպա սիր., յբ. **čāya**, կբ. **čayu** «տղա, երեխա» և ռոմ. **čhavo** «տղա, որդի, երեխա» բառերի հետ նույնական է և հանգում է հ. հա. ***čhāpa(ka)-** ձևին: Ալնի

¹⁷ Այս անցումը վկայված է դեռևս կենտրոնական և հյուսիս–արևմտյան պրակրիտներում, հմմտ.՝ պլ. **bāra-** «դում»:

լոնավրենում և դոնարիի բարբառներում բառը զարգացել է միջնայնավորական դիրքում վաղ. գնչ. $-v-$ > $-y-$ հնչյունական անցումով, հմմտ.՝ պրսկ. **java** «տղա»¹⁸:

** Հմմտ.՝ Հանձենի շրջանի լոնավրենում **inav** «պատանի, տղա» ձևին զուգահեռ վկայված **čavo** «տղա» և **raklo** «մարդ» բառերը: Հմմտ. նաև՝ դգ. **čabo** «տղա»:

*** Հմմտ.՝ լոմ. **čunak** «երեխա, փոքր», որը համգում է միևնույն հ. հա. արմատին:

**** Հմմտ.՝ գջ. **potur**, վս. **potor** «որդի»:

***** Հմմտ.՝ սիր. **kur**, հպ. **kru** «որդի»:

2. «Աղջիկ, դուստր» – գնչուական բարբառները այս հասկացությունների համար օգտագործում են հին հնդարիական տարբեր արմատների հանգող կամ անհայտ ծագման ձևեր.

		«աղջիկ, դուստր»	
լոմ.		čok'i*	հ. հա. *čhāvakkī-
ռոմ.		čhai** rakli	հ. հա. *čhāpī- հ. հա. *ladikkī-
դոմ	պղ.	čōni «աղջիկ» lači «աղջիկ» điri*** «դուստր»	հ. հա. *čhāpannī- <i>անհայտ է</i> հ. հա. duhitř-
	մշ.	lavti	<i>անհայտ է</i>
	դչ.	lafti / lovki****	<i>անհայտ է</i>

* Թորքաոսի լոնավրենում վկայված է **javri** «աղջիկ» տարբերակը, որը ռոմ. **čhai** «աղջիկ» բառի հետ նույնական է և համգում է հ. հա. ***čhāpī-** ձևին (տես նաև նախորդ՝ 3.1 ենթաբաժինը):

** Հմմտ.՝ դգ. **čai** «աղջիկ»:

*** Հմմտ.՝ մս. **dehri**, գջ. **dir**, վս. **dihir**, իս. **dirak**, նշ. **darika**, **dorika**, սբ. **dorikak** «աղջիկ, դուստր, հարս»:

**** Հմմտ.՝ սիր., հպ. **lavti**, կբ. **lafti**, լբ. **lāfti**, նբ. **lauti**, մս. **laftik** «աղջիկ»:

3. «Աքաղաղ, հավ, ճուտ» – տարբեր բարբառներ օգտագործում են «կանչել» բայից կազմված նկարագրական բառեր, հին հնդարիականից սերող կամ պարսկերենից փոխառյալ ձևեր.

		«աքաղաղ, հավ, ճուտ»	
լոմ.		čə'oy «աքաղաղ» p'antri / p'anri «հավ»	լոմ. čəř- «կանչել» հ. հա. pattrin-
ռոմ.		bašno «աքաղաղ» k(h)ayni, / khayni* «հավ» č(h)avri / čavarī «ճուտ»	ռոմ. baš- «կանչել» հ. հա. *čhāpađi-

¹⁸ Այս հնչյունական անցման համար հմմտ.՝ հյ. քրքռ. **juřab** < արաբ.-պրս. **javāb** «պատասխան»:

նմ	ադ.	xrēz «աքաղաղ» čmāri «հավ, ճուտ»	պրս. xurōs հ. հա. * čhāpađi-
	մշ.	gukar «աքաղաղ» jimari «հավ»	հ. հա. kukkuťá- հ. հա. * čhāpađi-
	դշ.	kukar «աքաղաղ»* jimari / čimari «հավ»**	հ. հա. kukkuťá- հ. հա. * čhāpađi-

* Հմմտ.՝ դգ. *kaŋniye* «հավ»:

** Հմմտ.՝ ք. *kukkar* «աքաղաղ», զջ. *kokori*, պրսկ. *kukri* «ձու»:

*** Հմմտ.՝ լր., կր. *čumāri*, նք. *šmari*, մս. *jimiri*, խա. *čumri*, եգ. *čuriya* «հավ», զջ. *čumarri* «աղալնի», նշ. *čamori*, դն. *čemuri* «հավ, աքաղաղ, թռչուն, ձու»:

4. «**Շուն, կատու**» – հասկացությունների համար գնչուական տարբեր բարբառների ձևերը հանգում են հիմնականում հին հնդարիական արմատների, սակայն առկա են նաև փոխառյալ, հնչափմաստային և անհայտ ծագման բառեր.

		«Շուն, կատու»	
լոմ.		solav «շուն» * mogav «կատու»**	հ. հա. šunaka- <i>հնչափմաստային</i>
ռոմ.		jukel «շուն» bili «կատու»	հ. հա. jakuťa- հ. հա. * billi-
դոմ	պդ.	snōta «շուն»*** kukeri «շան ձագ» blāri / brāri «կատու»	հ. հա. * šunatta- հ. հա. kukuri- հ. հա. biđālikā-
	մշ.	boyji «շուն»**** pisik «կատու»*****	<i>անհայտ է</i> հյ. pisik
	դշ.	senuta «շուն» kukāri «շուն» pišiq «կատու»	հ. հա. * šunatta- հ. հա. kukuri- ադր. քրդ. pišik

* Հմմտ.՝ դգ., եգ. *sunno*, պրսկ. *sōna* «շուն»:

** Հմմտ.՝ զջ. *morba* «կատու»:

*** Հմմտ.՝ նք. *senuta*, լր. *sanuta*, դք. *senuftā*, վս. *sonoftā*, սք. *senofto*, դն. *sennuta*, կր. *sarunter*, վն. *saroda* «շուն»:

**** Հմմտ.՝ սիր. *bodji* «շուն»:

***** Հմմտ.՝ կր. *psik* «կատու»:

5. «**Երկաթ, մետաղ**» – լոմավրենը և դոմարին մի կողմից, իսկ ռոմանին մյուս՝ պահպանում են հին հնդարիական երկու տարբեր արմատների հանգող ձևեր.

		«Երկաթ»	հ. հա.
լոմ.		loh	lōhá-

ռոմ.		sastir*	śastra-
դոմ	պղ.	lih(i)	lōhá-
	մշ.	lui	lōhá-
	ղշ.	lih**	lōhá-

* Հմնն.՝ դգ. *sista* «երկայթ»:

** Հմնն.՝ նղ. *leghi*, բղ. *loha*, *luḡa*, դբ. *lu*, ջֆ., սջ., խս. *lū* «երկայթ»:

6. «**Գյուղ**» – լոմավրենի և դոմարիի բարբառներում վկայված են պարսկական փոխառություններ, իսկ ռոմանին պահպանել է բնիկ հնդարիական ձևը.

		«գյուղ»	
լոմ.		lehi	պրս. dēh
ռոմ.		gav*	հ. հա. grāma-
դոմ	պղ.	dē	պրս. dēh
	մշ.	dī(h)	պրս. dēh / dīh
	ղշ.	deh*	պրս. dēh

** Հմնն.՝ դն. *gawja* «գյուղ»:

** Հմնն.՝ կբ., դմ. *deh*, խս. *dih* «գյուղ»

7. «**Աստված**» – լոմավրենը և ռոմանին պահպանում են հին հնդարիականից սերող բնիկ բառը, իսկ դոմարիի բարբառներում առկա է պարսկական փոխառություն.

		«Աստված»	
լոմ.		leval	հ. հա. dēvatā-
ռոմ.		deval / del	հ. հա. dēvatā-
դոմ	պղ.	xuyā	պրս. xudā(y)
	մշ.	xuva / huva	պրս. xudā(y)
	ղշ.	xuya*	պրս. xudā(y)**

* Հմնն.՝ բղ. *xuda*, վն. *xoya*, հպ. *xua* «Աստված, երկինք»

** Դասական պարսկերենի այս ձևին են հանգում նաև լոմ. *xula* և ռոմ. *xulax* «տեղ» բառերը՝ միջձայնավորական դիրքում *d* > *l* անցումով:

8. «**Մորուք, ծնոտ**» – լոմավրենը և դոմարիի բարբառները պահպանել են հնդարիական բառը, մինչդեռ ռոմանիում վկայված տարբերակի ծագումն անհայտ է.

		«մորուք, ծնոտ»	հ. հա.
լոմ.		konč'	kūrcá-

ռոմ.		čhor	<i>անհայտ է</i>
դոմ	պղ.	keč / ukči	kūrcá-
	մշ.	gu kūrcá-	kūrcá-
	ղչ.	kuč* «մորուք»	kūrcá-

* Հմնն. ՝ լր. **keč**, լղ. **kuč** «մորուք»:

9. «**խփել, ծեծել**» – երեք բարբառախմբերում էլ վկայված են բնիկ բառեր, լոմավրենում առկա է երկու հին հնդարիական արմատների հանգող ձև, որոնցից մեկն այն մոտեցնում է ռոմանիի և պաղեստինյան գնչուների բարբառին, իսկ մյուսը՝ Մարաշի շրջակայքի գնչուական խոսվածքին.

		«խփել, ծեծել»	h. հա.
լոմ.		kur- «ծեծել, խփել» vah-* «խփել»	kuřt- vadh-
ռոմ.		kur-	kuřt-
դոմ	պղ.	ukt-	kuřt-
	մշ.	vah- / veh- «խփել»	vadh-
	ղչ.	-**	

* Հմնն. ՝ Թորասի լոմ. **vah-** «խփել»:

** Ղարաչի գնչուների բարբառն արտաստորոշ նյութերում «խփել, ծեծել» բայը վկայված չէ:

10. «**Այրել, վառել**» – գնչուական տարբեր բարբառներ հանգում են հին կամ միջին հնդարիական զանազան ձևերի: Նույնական են դարաչինների և պաղեստինյան գնչուների բառերը, Մարաշի շրջակայքի գնչուական բարբառում առկա է երկրորդական կազմություն «կրակ» բառից, ռոմանիի ձևերից մեկի ծագումն անհայտ է.

		«այրել, վառել»	
լոմ.		lavav-	h. հա. dāv-
ռոմ.		phab- thab-	<i>անհայտ է</i> մ. հա. *dabbh-
դոմ	պղ.	waš -	h. հա. ōš-
	մշ.	yak ker-	մշ. yak «կրակ»
	ղչ.	vaš-	h. հա. ōš-


11. «**Վախենալ**» – լոմավրենի և դոմարիի բոլոր բարբառների ձևերը հանգում են հին հնդարիական միևնույն արմատին, իսկ ռոմանիի երկու բառերը՝ հին հնդարիական այլ ձևերի.

		«վախենալ»	h. haa.
լոմ.		bih-	bihh-
ռոմ.		traš- dar-	tras- dār-
դոմ	պղ.	bi--	bihh-
	մշ.	bih-	bihh-
	ղշ.	bi-	bihh-

Ամփոփում

Ընդհանրացնելով վերևում բերված գնչուական հիմնական բարբառախմբերի միջև առկա հնչյունական և բառային գուգաբանությունները, պետք է նշել, որ լոմավրենը, որոշ դեպքերում մերձենալով, կամ ռոմանիին, կամ դոմարիի այս կամ այն բարբառին, այսուհանդերձ, հիմնականում դրսևորում է միայն իրեն հասուկ հատկանիշներ և զարգացումներ, ուստի այն պետք է դիտարկել որպես ռոմանիից և դոմարիից առանձին կանգնած գնչուական երրորդ բարբառախումբ: Այսինքն՝ ըստ երևույթին, նախագնչուերենը կամ վաղնջական գնչուերենն ի սկզբանե տրոհվել է երեք առանձին բարբառախմբերի, որոնցից մեկից էլ սերում է հայ-բոշաների գաղտնավեզուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լոմավրենը, թե՛ լեզվական, և թե՛ աշխարհագրական տեսանկյունից, իրականում, միջանկյալ դիրք է զբաղեցնում մի կողմից ռոմանիի, իսկ մյուս կողմից դոմարիի միջև, այն պետք է համարել **կենտրոնական գնչուական բարբառախումբ**, ռոմանիի և դոմարիի համար օգտագործելով համապատասխանաբար՝ **արևմտագնչուական բարբառախումբ** և **արևելագնչուական բարբառախումբ** եզրերը:

Գնչուական լեզուների բարբառային նոր դասակարգումը



Համառոտագրություններ

- բլ. – բալուջ անունով հայտնի միջինասիական գնչուների լեզուն
գնչ. – գնչու երեն (բոլոր գնչուական լեզուներն ու բարբառները)
դմ. – դուման ինքնանվանմամբ հայտնի հյուսիսային Իրաքի գնչուների լեզուն
դոմ. – դոմարի (մերձավորարևելյան գնչուական բարբառների ընդհանուր անվանումը)
եգ. – հալաքի անունով հայտնի եգիպտական գնչուների լեզուն
զգ. – զարգարի անունով հայտնի Իրանի գնչուների լեզուն (ռոմանո)
զջ. – Իրանի Չանջանի շրջանի գնչուների լեզուն
լբ. – լիբանանյան (Բեյրութ) գնչուների լեզուն
լթ. – լութի անունով հայտնի Իրանի Խորասանի գնչուների լեզուն
լոմ. – լոմավրեն (հայ-բոշաների գաղտնալեզուն, բոշայերեն)
խա. – Խորասանի իրանական գնչուների լեզուն
կբ. – կուրբաթ անունով հայտնի հյուսիսային Սիրիայի գնչուների լեզուն
հ. հա. – հին հնդարիական
հյ. – հայերեն
հպ. – իրենց դում անվանող Հալեայի շրջակայքի գնչուների լեզուն
դբ. – դուրբաթի անունով հայտնի հարավ-արևելյան Իրանի գնչուների լեզուն
դգ. – դագար անունով հայտնի եգիպտական գնչուների լեզուն
դն. – Իրանի Ղայինաթի շրջանի գնչուների լեզուն
դչ. – դարաչի անունով հայտնի հյուսիսային Իրանի և Ադրբեջանի գնչուների լեզուն
մդ. – Անկարայից հյուսիս-արևմուտք Թուրքիայի Բոլու գավառում բնակվող էլեքչի «մաղագործ» անունով հայտնի գնչուանման խմբի գաղտնալեզուն
մջ. – Մարաշի, Այնթափի և հարևան տարածքների գնչուների լեզուն
մպ. – մըթթրպ անունով հայտնի արևելյան Թուրքիայի գնչուների լեզուն
նբ. – պաղեստինյան Նաբլուս քաղաքի մոտակայքում գնչուների գրի առնված լեզուն
նշ. – Իրանի Նիշապուրի շրջանի գնչուների լեզուն
պկ. – պրակրիտներ
պղ. – պաղեստինյան (Երուսաղեմի) գնչուների լեզուն (դոմարիի ամենուտումնասիրված բարբառը)
պս. – Gobineau-ի կողմից գրի առնված պարսկական գնչուների լեզուն, տեղագրությունը անհայտ է
պրս. – պարսկերեն
պրսկ. – պարսկական գնչուների գաղտնալեզուն
ջֆ. – Իրանի Ջիրոֆթի շրջանի գնչուների լեզուն
ռոմ. – ռոմանի բլ. – բալուջ անունով հայտնի միջինասիական գնչուների լեզուն
սբ. – Իրանի Սարգեվարի շրջանի գնչուների լեզուն
սիր. – սիրիական (Դամասկոս) գնչուների լեզուն
սջ. – Իրանի Սիթջանի շրջանի գնչուների լեզուն
վն. – Վանի գնչուների լեզուն
վս. – դորբաթ անունով հայտնի Իրանի Վաֆսի, Աշթիյանի և Թաֆրեշի շրջանների գնչուների լեզուն

МЕСТО ЛОМАВРЕНА СРЕДИ ЦЫГАНСКИХ ЯЗЫКОВ

Вардан Восканян

(Резюме)

Несмотря на то, что с начала 20-го века предпринимались несколько научных попыток (Finck, 1906; Sampson, 1923, 1926; Turner, 1926 и др.) определить место ломаврена, тайного языка армянских цыган, среди других цыганских языков, данный вопрос все еще открыт для академического исследования.

В статье обсуждается проблема классификации цыганских языков и место ломаврена в цыганском лингвистическом массиве, на основе историко-сравнительного анализа фонетических и лексических изоглосс, засвидетельствованных в трех основных цыганских языковых ветвях - романи, домари и ломаврена.

THE PLACE OF LOMAVREN AMONG THE GYPSY LANGUAGES

Vardan Voskanian

(Summary)

Despite the fact that starting from the early 20th century there were some scholarly attempts (Finck, 1906; Sampson, 1923, 1926; Turner, 1926, etc.) to clarify the place of Lomavren, the secret language of Armenian Gypsies, among other Gypsy languages, the issue is still open for the academic investigation.

In the article the problem of classification of Gypsy languages and the place of Lomavren in the Gypsy linguistic massive have been discussed based on the historical-comparative analysis of phonetical and lexical isoglosses attested in the three main Gypsy language branches - Romani, Domari and Lomavren.